ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Հին աշխարհի գիտունները և նրանց հետևող հայ ճարտասանները պարբերության հիմնական հատկանիշը համարում են խոսքի ամբողջացումը և լրիվությունը, նույնիսկ եթե ասվածը մի լրիվ ու ամբողջացած նախադասություն է, նրանք այդ պարբերություն են ընդունում. Չնայած սրան, այնուամենայնիվ, իսկական պարբերությունը ըստ նրանց պետք է կազմված լինի երկու մասից և ունենա սկիզբ ու վերջ, մանավանդ վերջը պարբերության համար խիստ էական նշանակություն ունի։ Պարբերությունը թարգմանված է հունարեն Περιοδος բառից, որ նշանակում է՝ շրջանագիծ, շրջան, այսինքն՝ դա այնպիսի մի խոսք է, որ շրջանագծի, օղակի նման կլորացված է։ Եթե արտահայտության մեջ վերջին մասը չի փակում ասվածը, չի ամբողջացնում ըստ կառուցվածքի և բովանդակության, ապա այդպիսի արտահայտությունը պարբերություն չի կարող կազմել։ Օրինակ՝ Թե ով էր նրան այնտեղ կանգնեցրել, սա մի նախադասություն է, բայց պարբերություն չէ, որովհետև չի վերջացած, կլորացված չէ. եթե դրան ավելացնենք՝ այդ նայոնի չէր, ապա նախադասությունը կլրանա, կամբողջացվի և, ըստ հին գիտունների, կդառնա պարբերություն։ Ըստ նրանց պարբերություն է նաև նախադասության հետևյալ տիպը. Կղզին հեռու էր ցամաքից մեկ ժամվա ծովային նաճապարհով։ Այս դեպքում էլ ձևով և իմաստով արտահայտությունը ամբողջացած է։ Հին ուսումնասիրողները շատ անգամ սովորական նախադասությունը շփոթում են պարբերության հետ. նրանք երբեմն միայն մի հատկանիշով են զանազանում պարբերությունը և նախադասությունը. պարբերությունը կազմված է ներդաշնակ ու համաչափ դասավորված անդամներից, իսկ նախադասությունը այդպիսի համաչափ ներդաշնակություն չի պահանջում։ Սակայն այս զանազանությունն էլ հանդես է գալիս այն դեպքում, երբ պարբերության մասերը ունեն առնվազն երկու անդամներ։ Նույնիսկ երկու անդամների այդպիսի ներդաշնակ շարադասումը անզգալի կմնա. գոնե երեք, չորս և ավելի անդամներ պետք է ունենան այդ մասերը, որպեսզի համաչափ ու ներդաշնակ տեղաբաշխումը ցայտուն դառնա։ Հին ուսումնասիրողները չորս անդամից ավելի մասեր ունեցող պարբերությունը համարում են ոչ իսկական պարբերություն. այդպիսի կառուցվածքը նրանք դիտում են իբրև պարբերությունային կառուցվածք, բայց ոչ թե իսկական պարբերություն։

Արիստոտելը երկու տեսակ պարբերություն է սահմանում. մեկը կոչում է տրոհական, իսկ մյուսը՝ հակադրական. տրոհական պարբերության համար նա բերում է հետևյալ օրինակը. «Ես հաճախ զարմանում եմ նրա վրա՝ ով սահմանեց հանդիսավոր ժողովները և հիմնադրեց մարմնամարզական մրցությունները». իսկ հակադրականի օրինակը այս է. «Նրանք ծառայություն մատուցեցին և նրանց և ուրիշներին—և նրանց, ովքեր մնացին և նրանց, ովքեր հետևեցին նրանց. երկրորդներին նրանք իշխելու համար շնորհեցին ավելի շատ հող, քան նրանք ունեին տանը, առաջիններին թողեցին բավականաչափ հող տանը»։

Հին գիտունները նկատեցին պարբերության և նախադասության տարբերությունը, սակայն պարբերության լիակատար սահմանագատումը նախադասությունից չկարողացան սահմանել։ Հիմնական տարբերությունը, որ նրանք դնում են, պարբերության ամբողջական ու լրիվ լինելն է՝ այսինքն այն, որ արտահայտությունը փակվում, կլորանում է։ Երկրորդ տարբերությունը համարում են պարբերության մասերի և անդամների ներդաշնակ ու համաչափ դասավորությունը։ Արիստոտելը տալիս է նաև հնչերանգության աղոտ հասկացողությունը, սակայն այդ հասկացողությունը շնչառության կանոնավորման նշումով է սահմանափակվում։

Նրանք սահմանեցին նաև պարբերության մասերը. հույները պարբերության մասերը կոչում են կոլոն. նշեցին, որ պարբերությունը առնվազն երկու մաս պետք է ունենա, բայց հենց այստեղ դիջեցին նրանով, որ ընդունեցին նաև պարզ պարբերություն, այսինքն՝ մի ամբողջական վերջավորված պարզ նախադասությունը նույնպես համարեցին պարբերություն, որ հետագա բոլոր

ուսումնասիրողներին շփոթեցրեց, և նրանք չկարողացան որոշակի սահմանազատել պարբերությունն ու նախադասությունը։

Հին ուսումնասիրողները սխալվեցին նաև պարբերության մասերի բաժանման մեջ։ Նրանք մասերի բաժանումը կատարեցին քերականական հիմունքներով, այսինքն՝ ամբողջը քանի նախադասություն ունի, նշանակում է՝ այդքան էլ մաս ունի. օրինակ՝ հայերենի լավագույն ճարտասանության դրքի՝ Հեղինակը՝ Ագոնցը նոանդամ պարբերության օրինակ է բերում այս նախադասությունը. «Քանզի ոչն, որ արար զմարդն ի պատկեր բարերարութեան իւրոյ բարի /և նոցա զնոս ի նախանձուէ բանսարկուին գաւաճանեալ և մեռանալ/ ըստ արդար իրաւանցն թողուլ ի ձեռս որսողին»։ Ինչպես ցույց են տալիս ուղղագրությունները, այս բարդ համադասական նախադասությունը տրոհված է ըստ առանձին նախադասությունների։ Սակայն այսպիսի քերականական տրոհումը իրոք պարբերության մասնատման միջոց այժմ չի ընդունվում։

Պարբերության ամենակարևոր հատկանիշը նրա երկմասնյա լինելն է։ Այդ երկմասնությունը պայմանավորված է քերականական կառուցվածքի առանձին տարրերով, ինչպես որ ընդունում են հին դիտումները։ Պարբերության երկմասնությունը դուստ հնչերանգային (ինտոնացիոն) հատկացողություն է, որ պարբերության համար բնութագրական լինելով, իր հետ դուգակցում է նաև այլ առանձնահատկություններ, որոնք միասնաբար պարբերությունը առանձնացնում են սովորական նախադասությունից իրոք ուսումնասիրության հատուկ առարկա անկախ նախադասությունից։ Հենց սկզբից նշենք ուրեմն, որ մի պարզ նախադասությունը, եթե այն մի հնչերանգային լարումով է արտաբերվում, պարբերություն չի կարող լինել. օրինակ՝ Փոթորկային դիշերին հաջորդեց դարնանային խաղաղ, հովասուն առավոտը (ԸՆԺ, VII, 22)։ Սա մի պարզ նախադասություն է և արտաբերվում է մի ամբողջական հավասար հնչերանգով, ուստի պարբերություն լինել չի կարող։

Բայց և կան այնպիսի նախադասություններ, որոնք երկու մասից են կազմվում և արտաբերվում են տարբեր հնչերանգներով. հենց այդպիսիք են բոլոր կարգի բարդ նախադասությունները. օրինակ՝ Թեև ձորի երկու ծայրերը դեռ քողավորված էին մառախուղով, սակայն արևը պարզ էր և պղտոր դեռևս երևում էր ցածում (ՎՓԸԵ, 370)։ Այս բարդ նախադասությունը երկու հնչերանգային միավորներից է կազմված. մեկ հնչերանգային միավորը վերջանում է մառախուղով, իսկ մյուսը սկսվում սակայն շաղկապով և ընդհատվում է նախադասության վերջում։ Այսպիսի երկմասնյա նախադասությունը նույնպես պարբերություն չէ։ Ուրեմն՝ պարզ նախադասությունը պարբերություն չէ, որովհետև միամասն է. իսկ բարդ նախադասությունը ինչո՞ւ պարբերություն չէ, չէ՞ որ պարբերության հիմնական պայմանը երկմասնյա լինելն է։ Պարբերությունը իր շարահյուսական կառուցվածքով ավելի բարդ ամբողջություն է և ավելի ծավալուն է, քան պարզ ու բարդ նախադասությունները։ Երբեմն այն կարող է մի ամբողջական բանաստեղծություն լինել, մի հսկա պարբերություն կազմել։ Այսպիսի ծավալունությունը, լրիվությունը և կատարելությունը նույնպես կարևոր է պարբերության համար, սակայն դա պարբերությունը բնութագրող հիմնական պայմաններից չէ։ Թումանյանը Տոլստոյին բնութագրում է հետևյալ ընդարձակ պարբերությամբ (պարբերությունը չշփոթել պարբերության հետ. պարբերությունը абзац-ն է). «Ընկավ ռուսական վիթխարի հանճարը, ու մահվան բոթից թնդում է լայնածավալ Ռուսաստանը մի ծայրից մինչև մյուսը։ Թնդում է և ամբողջ լուսավոր աշխարհը, որովհետև, ինչպես ճշմարիտ մեծ մարդ, կրելով կատարյալ իր ժողովրդի հոգին ու պատկերը, հանդիսանում էր իր ժամանակի գեղարվեստական գրականության այն հոյակապ ուժը, որ կարող էր մի հայացքով ու մի գրվածքով ամփոփել կյանքը ահագին տարածության վրա՝ վերևից մինչև ներքև, արտաքին կեղևից մինչև հոգու ամենածածուկ խորշերը, հանդիսանում էր իր ժամանակի հսկա փիլիսոփան, որ աշխատում էր լուծել կյանքի առեղծվածը, խորամուխ լինել, հասկանալ ու պատասխան գտնել, թե ինչու է ապրում մարդը, և փիլիսոփայական խաղաղությամբ նայելով մահվան պաղ ու խորունկ աչքերին՝ ուզում էր հաշտություն ստեղծի նրա ու նրա առջև սարսափող հոգիների մեջ» (ՀԹԵԺ, IV, 154)։ Այս ընդարձակածավալ բաղմաբարդ նախադասությունը նույնպես պարբերություն չէ, որովհետև չունի մասերի որոշակի բաժանվածություն և ներդաշնակ, համաչափ ու կշռույթավոր (ռիթմիկ) կառուցվածք, որոնք պարբերության էական հատկանիշներից են, և առանց որոնց պարբերությունը չի կարող ձևավորվել ու ամբողջանալ։ Ուրեմն պարբերության ձևավորման համար անհրաժեշտ է քերականական, հնչերանգային և լեզվական արվեստի միասնությունը։ Լեզվական արվեստ արտահայտության մեջ

1 Ս. Ագոնց, Ճարտասանութիւն բովանդակեալ ի հինգ դիրս, Վենետիկ, 1775։

պետք է հասկանալ մասերի ներդաշնակ ու համաչափ դասավորությունը, անդամների կառուցիկ շարադասությունը, ըստ այսմ նաև կշռույթի կարգավորումը, հարակրկնությունները և այլն։

Պարբերության մասերից ամենաէականը առաջին մասն է, որ երկու անդամից երբեք պակաս չպետք է լինի. օրինակ՝ «Արևաչյա և ծովաչյա փերիների հայացքների հուրն ու նետը ճառագայթում են ամեն կողմ, տարափի պես թափվում են խանի վրա, համբույրների ու հրապույրների ոստայն են հյուսում նրա շուրջը,—բայց պողպատյա վահան է դարձել խանի սիրտը» (ԱԻԵԺ, III, 207)։ Այս պարբերության առաջին մասը վերջանում է բայց բառի մոտ և կազմված է երեք անդամից. եթե այդ անդամներից երկուսը հանենք, ապա պարբերությունը կքայքայվի և կդառնա սովորական նախադասություն։ Հենց այդ նույն էջում, որտեղից բերվեց վերոհիշյալ օրինակը, կա մի այսպիսի նախադասություն. «Եվ խմում է խանը, սակայն նրա հոգին սառույց սառնամանիք է...». որովհետև առաջին մասը միայն մի նախադասություն է, ուստի դա պարբերություն չէ։

Ուրեմն պարբերության համար առաջին մասի երկանդամությունն ու բազմանդամությունը պարբերության էական պայմանն է։ Սակայն այստեղ պետք է հաշվի առնել մի այլ կարևոր հանգամանք ևս։ Պետք է առաջին մասի այդ հիշյալ անդամները միասեռ և միանման լինեն քերականորեն և կշռույթով։ Եթե դրանք տարբեր քերականական կառուցվածք ունենան և ծավալով խիստ տարբեր լինեն, այդպիսի անդամներ ունեցող առաջին մասը չի կարող պարբերության մաս կազմել. օրինակ՝ «Եթե Սամվելը գոնե մի անգամ նայելու լիներ խեղճ պատանու վրա, իսկույն կնկատեր նրա անհանգիստ դրությունը, բայց Սամվելը հափշտակված էր յուր քաղցր խոկումներով» (ՐԵԺ, VII, 163)։ Բայց-ից առաջ բերված մասը երկու միավոր ունի, սակայն ինչպես ասվեց, դա պարբերության մաս չի կարող լինել, որովհետև դրանցից մեկը երկրորդական նախադասություն է, իսկ մյուսը՝ գլխավոր. դրանք քերականորեն համասեռ չեն։ Առաջին մասի անդամների քերականական համասեռությունը պարտադիր պայման է պարբերության համար. օրինակ՝ «(Կենդանիների արքան) իր կյանքում երբեք կապեր չէր տեսել, արգելքի առաջ գլուխ չէր ծռել, կտրել էր նա դաշտ, ձոր, անտառ, անապատ անհուն, անցել էր անտառ, գետեր սրընթաց, մագլցել լեռներ, աշխարհն ամբողջ ոտնատակ տվել, ազատ օդի մեջ ապրել անկաշկանդ, ազատ էր ծնվել, ազատ էր սնվել, և ահա այժմ կծկած, գալարած, ցանցով խճճած, գետնին պինդ գամած, անհասկանալի կապերով սեղմած. չէր էլ ըմբռնում, թե ինչ էր եղել» (ՎՓԸԵ, 264)։ Առաջին մասը վերջանում է ազատ էր սնվել նախադասությամբ. այդ մասի անդամները բոլորն էլ թվարկվող միավորյալ նախադասություններ են, այսինքն՝ քերականորեն համասեռ են։

Առաջին մասի անդամները քերականական համասեռության հետևանքով ունենում են համաչափ ու ներդաշնակ կառույց, բառերի զուգահեռ շարադասություն, արտաբերական նույնանմանություն, իմաստային մոտիկություն և այս ամենի հետևանքով կանոնավոր կշռույթ։ Իհարկե, եթե առաջին մասի անդամների համար քերականական համասեռությունը պարտադիր է, ապա վերջին հիշատակված հատկանիշները միաժամանակ և միասին պարտադիր պայման չեն. արդեն քերականական համասեռությունը իր հետ բերում է հիշյալ հատկանիշները ավելի կամ պակաս չափով։

Պարբերության առաջին մասի անդամների քերականական համասեռությունը հաճախ ուղեկցվում է հարակրկնություններով և վերջույթներով, որոնք կարգավորում են շարադասությունն ու կշռույթը, դառնում են ցայտուն անդամահատման ձևական միջոցներ. եթե նախադասությունն ամեն անգամ սկսվում է միևնույն բառով, ապա պարզորոշ ցույց է տալիս նոր անդամի սկիզբը, իսկ եթե վերջանում է միևնույն բառով, նշում է այդ անդամի վերջը։ Երբ անդամը սկսվում կամ վերջանում է միևնույն բառով, այդ նշանակում է, որ նախադասությունների նույնանման անդամները շարադասվում են իրար համապատասխան տեղերում. ստացվում է համաչափ ու ներդաշնակ շարադասություն և դրա հետևանքով որոշակի կշռույթ, որ կանոնավորվում է նաև անդամների համահավասար արտաբերական ծավալով. այս նշանակում է, որ անդամներից յուրաքանչյուրի բոլոր բառերի վանկաքանակների մեջ թվական մեծ տարբերություն չկա. ոտանավորի մեջ դրանք հավասար են, իսկ արձակի մեջ պարտադիր չէ ճիշտ հավասարաչափությունը, բայց մոտավոր ճշտությունը անհրաժեշտ է կշռույթը կանոնավորելու համար։ Այստեղ դեր է խաղում նաև հարակրկնությունը, որ հատուկ է նաև արձակ պարբերությանը. չափածո խոսքի մեջ տողերի սկիզբը հաճախ առանց դրանց էլ որոշակի է, իսկ արձակի մեջ հարակրկնությունը անդամահատման միջոց է. օրինակ՝ «Եթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Քսենոփոնի 24 դար առաջ նկարագրած գետնափոր խրճիթները, եթե մենք այսօր տեսնում ենք Հայաստանում Հերոդոտոսի 24 դար առաջ նկարագրած մաշկապատ նա-

վակները նփրատ գետի վրա,—ինչու պետք է չմտածել, որ դեռ շատ բան չէ փոխվել հայոց աշխարհում» (ԲԵԺ, VII, 8)։ «Ամեն անդամ, որ նայում էի նրա գարմանալի պայծառ աչքերին, որոնց մեջ կարծես արևն էր վառվում. ամեն անդամ, որ լսում էի նրա կենսաթրթիռ ծիծաղը, որի մեջ կարծես դարնանային շարաձայն վտակ էր քչքչում. ամեն անդամ, որ առնում էի նրան գիրկս և ականջիս մոտ լսում նրա կուսական կրծքի հեքը, այտերիս վոս դդում նրա թավիշ-մազերի էլեկտրականացնող շփումը,— ինձ տիրում էր այնպիսի մի խենթ զգացում, որի ազդեցության տակ պատրաստ էի գործել և ամենամեծ առաքինություններ, և ամենամեծ ոճիրը՝ միայն թե նա հրամայեր» (ՆԵԺ, I, 114)։ Այս պարբերության մեջ կրկնվող բառերը ավելի բազմազան են, որ նպաստում են և՛ անդամահատման, և՛ կշռույթի կանոնավորման։

Պարբերության երկու մասերը քերականական, հնչերանգային և իմաստային կողմերով միմյանց հակադիր են։ Քերականական ու իմաստային հակադրություններ երկու մասերի համար պարտադիր պայման չէ. հակադրությունն փոխարեն կարող է հանդես գալ զուգադրություններ. մասերը կարող են իրար հետ համադրվել բարդ ստորադասական, համադասական կապակցությամբ և այլն, սակայն հնչերանգային սուր հակադրություններ միշտ ուղեկցում է պարբերությունն և դառնում է նրա մասերի բաժանման էական պայմաններ։ Պարբերության առաջին մասը արտաբերվում է բարձրացող հնչերանգով, իսկ երկրորդ մասը դրան հակադիր ունի իջնող հնչերանգ։ Այդ բարձրացող և իջնող հակադրամասերը ոչ թե ալիքաձև բարձրանում և իջնում են, այլ մասնատվում են որոշակի դաղարով։ Պարբերության առաջին մասը բազմանդամանի ու ծավալուն մի կառուցվածք է, որ ունի համասեռ տարրեր. սրանք բոլորն էլ արտաբերվում են բարձր հնչերանգով, ըստ որում միշտ հաջորդը նախորդի համեմատությամբ ավելի բարձր է հնչվում, և որքան շատ են այդ տարրերը, այնքան ուժեղանում է հնչերանգային լարվածությունը. առաջին մասի վերջին անդամը արտաբերվում է ամենաբարձր լարվածությամբ և վերջանում է ցայտուն մի դաղարով։ Այս դաղարն էլ հենց դառնում է պարբերության մասնատման բնական սահմանը։ Դաղարից հետո երկրորդ մասը նախորդ մասի համեմատությամբ ցածր է սկսվում և որքան դնում է դեպի վերջը, այնքան ձայնը իջնում է, մինչև որ հասնում է սվարտին.

Ակեպտիկ ժպտում մը դանդաղագին
Երբ մաղ ըմպած է մռուրը կյանքին,
Երբ ծառայած է կամքով կուրովի՝
Այն մեծ վարպետին. որ միշտ կը կոչվի.
Հանչցած է դողդոջ դիմույն որ Սերն է.
Ազգաց. անհատին Պատմության դմեն
Նայած է անգամ մը մյուս երեսին.
Ուրվեստն հավակնոտ. սիրտն ասբարտավան.
Սուգը Երեկին. Երկյուղը Վաղվան
Ու ճշմարտության հոգին ծարավի,
Ջնեած է Երկնից պարտաս ծավի՝
Հին աստվածներու վիճն այն մշտակա,—
Այդ մարդուն համար ուրիշ վայր չի կա
Ավելի հաղցրիկ հնչտանքով հոգի.
Քան գերեզմանով մ'աղքատիկ գլուղի (ՌՍԵ, 137)։

Մինչև «Հին աստվածներու վիճն այն մշտակա» տողը արտաբերվում է բարձր հնչերանգով, ապա դալիս է դաղարը և հետո ցածր տոնով սկսվում է մյուս մասը, որ ավելի ցածրանալով վերջանում է։

Դաղարը պարբերության էական հատկանիշներից մեկն է. ճիշտ է, այն սոսկ հնչերանգային նշանակություն ունի, բայց հենց դա է, որ պարբերությունը մասնատում և որոշում է նրա երկու մասերի սահմանը, և այդ մասերը հակադրում է միմյանց իր բարձրացող և իջնող հնչերանգներով և արտաբերական չրջադարձով մասերը ամբողջացնում է իրրև արտահայտության նոր որակ։ Դաղարը սկզբնական մասի անընդհատ բարձրացող լարվածությունը չի թուլացնում. ընդհակառակն, ավելի է սրում այն՝ ընթերցողին կամ լսողին դնելով սպասողական վիճակի մեջ. լարվածության լուծումը տեղի է ունենում երկրորդ մասի ավարտով, այսինքն՝ երկու մասերի ամբողջացումով։ Ուրեմն՝ դաղարը ոչ միայն մասնատման և երկու մասերը իրար հակադրելու հնչերանգային միջոց է, այլև պարբերության համար ունի կապակցական արժեք։ Ճիշտ է, հաճախ պարբերության երկու մասերը կապակցվում են շաղկապներով, շաղկապային ու ընդհանրացնող

բառերով, սակայն դրանց հետ և առանց դրանց դպարբը միշտ առկա է իրրև ներքին հնչերանգային անհրաժեշտ կապակցող տարր։

Պարբերության առաջին մասը արտահայտվում է ամեն տեսակ քերականական միավորներով. դրանք կարող են լինել պարզ համասեռ թվարկվող նախադասություններ, միավորյալ նախադասություններ, դլխավոր և երկրորդական նախադասություններ, դերբայական դարձվածներ, դանազան տիպի բառակապակցություններ, նույնիսկ առանձին բառեր, եթե դրանք հընչերանգով անկախանում են. ուրեմն՝ առաջին մասի համար ձևավորված նախադասությունը պարտադիր պայման չէ. բավական է, որ դա ունենա որոշ բաղադրականություն ունեցող եռկանդամ կամ բազմանդամ համասեռ միավորներ, որոնք իրար հետ կազմեն անընդհատ բարձրացող հնչերանգային թվարկվող շարքեր, ունենան կապակցման նույնություն, միանման անդամահատություն, իմաստային մոտիկություն և ամանակային որոշ համաչափություն, որ պայմանավորում է պարբերության առաջին մասի անդամների կշռությունը, և ավարտվի թվարկումը, ապա պարբերության առաջին մասը արդեն ձևավորված է։

Մասերի առանձին բաղադրիչները կոչվում են անդամ, որոնք կարող են բարդանալ լրացուցիչ միավորներով, այսինքն՝ նույնիսկ բառակապակցություն հանդիսացող պարբերության մի որևէ անդամ կարող է ունենալ բացահայտիչ. երկրորդական որևէ լրացուցիչ նախադասություն և այլն։ Ճիշտ է, այս դեպքում հնչերանգային հաջորդականության որոշ բեկում է լինում, սակայն հնչերանգային բարձրացման ու լարվածության ընդհանուր գիծը վերականգնվում ու շարունակվում է հաջորդող անդամի թվարկումով։

Պարտադիր չէ, որ բոլոր անդամները լրացումներ ունենան, սակայն երբեմն համաչափությունն ու կշռությունը պահպանելու համար կատարվում է այդ։ Այդպիսի կատարյալ պարբերության օրինակ է «Մատեան ողբերդութեանն» ԾԱ բանի ա հատվածը. «Եւ արդ առ երկրածի՞ն ոք պատեցայց այրս մահացու ամենապատիր եթէ, ընդունայն է աղաղակելն. առ մահկանացու բանական եթէ, սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն. առ մարդ ոք եղծական եթէ, ընդ տկարութիւն բանին և նանիր է զօրութիւնն, առ իշխա՞նս երկրաւոր գահից եթէ, անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն...,—այլ առ քեզ, բարերար..., որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի»։

Պարբերության առաջին մասը նույնպես պետք է ավարտուն լինի, այսինքն նրա անդամները պետք է թվարկված վերջացած լինեն, այլապես պարբերություն չի կազմվի. օրինակ՝ «Սև շորացած մարմին ուներ, գլխի վրա կոբռ և նոսրացած մազերով, աչքերը խավարակուռ գիշերվա նման խոր, մատները երկար, ղդար և ուռած երակներով, ճակատը ծուռ, կուրծքը ներս ընկած, փորը—բայց փոր չուներ, կրծքի անմիջապես տակից սկսում էին նրա սրունքները» (ՎԲԵ, 33)։ Այս օրինակի մեջ թվարկվող առաջին մասը չի վերջացած, ուստի անավարտ է և՛ իմաստով, և՛ հնչերանգով։

Պարբերության առաջին մասը կազմվում է երկու և ավելի անդամներից. այդ անդամները կարող են դարձյալ մաս միավորներ ունենալ։ Եթե առաջին մասը կազմված է բարդ նախադասությունների շարքից, ապա այդ բարդ նախադասությունների յուրաքանչյուր պարզ նախադասություն առանձին տարր է, որ պայմանականորեն կոչում ենք հատած։ Ուրեմն ամբողջ պարբերությունը ունի երկու մաս, մասերը ունեն անդամներ, անդամները՝ հատածներ։ Ըստ պարբերության առաջին մասի անդամների քանակի՝ պարբերությունը լինում է երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ։

Երկանդամանի պարբերության օրինակ.

Բանուն ու նարուար դուն ունիս ձեռներ,
Շատ կեռրինես բանկագին բաներ,—
Բայց թե ձեռներդ շահ չունի Հայաստան,
Թրեղ ենք քու ալ, ձեռիդ ալ վրան (ՌՊԵ, 15)։

Եռանդամ պարբերության օրինակներ.

«Զի եթէ զլիճ մի ծովուց ի յորակաթիւն դեղոյ յեղեղեցից, և զդաշտս ասպարիսօք բազմաք սահմանեալ ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից, և զպուրակս յոքունց անտառաց. շամրից եղեգանց ի հատուածս գոյութեան գրչաց կաղմեցից—և ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց գօրեցից ընդ գրով սահմանի գրաւել» (ԳՆ, ՞)։

«Քնարի, սրնգի և ծնծղայի ներդաշնակությունը հյուսվելով և ոլորվելով մարմարյա սյուների հետ բարձրանում է վեր, փովում է ոսկի առաստաղին, թռչում է դուրս՝ երկինք,—բայց չի հասնում խանի ականջին, բայց չի փոթորկում քարացած հոգին նրա» (ԱԻԵԺ, III, 207)։

Քառանդամ պարբերության օրինակ. «Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ մտրաս սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անդամ նուաճեալ թագաւորութեամբ,— սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս և արժանի գրոց յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել» (ՄԽՊՀ, I, Գ)։

Բազմանդամ պարբերության օրինակ. «Զի ոչ ոք է առաջին քան զնա, և ոչ ոք է յետոյ նման նմա, և ոչ ընկեր հաւասար նորին, և ոչ զոյութիւն ընդդիմակաց, և ոչ բնութիւն հիւթարեր ի պէտս նորա, և ոչ նիւթ ինչ, յորմէ առնիցէ, զոր առնելոց իցէ,— այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն և ի զոյանալ եկին ի չգոյէ և ի գոյէ» (Եղնիկ, I, Ա)։

Վերը բերված օրինակներից պարզ երևում է, որ պարբերության առաջին մասի միասեռ անդամները ավելի կամ պակաս չափով իրենց քերականական, հնչերանգային և նույնիսկ իմաստային կողմերով մոտ են իրար և երբեմն իսկ նման են։ Այդ մոտիկությունը արտահայտվում է անդամների լեզվական տարրերի ներդաշնակ դասավորությամբ. համեմատիր Եղնիկից բերված վերջին օրինակը. զրեթե բոլոր անդամները սկսում են ոչ ոչ՝ կապակցությամբ, համենայն դեպս ոչ-ը պահպանվում է մինչև մտքի վերջը, առաջին և երկրորդ անդամների (առաջին և յետոյ) քերականական միևնույն արժեքի բառերը շարադասված են անդամների ճիշտ համապատասխան տեղերում. անդամների վերջն են քաշված նաև զնա, նման, նորին, նորա դերանվանական ձևերը, որոնք միևնույն քերականական գործառնություն ունեն. ճիշտ համապատասխան տեղերում են նաև բնկեր, զոյություն, բնութիւն, նիւթ ենթակաները և սրանց՝ հաւասար, բնդդիմակաց, հիւթարեր, ինչ որոշիչները։ Այսպիսի ներդաշնակ ու չափակից շարադասությունը իր հետ ունենում է նաև կանոնավոր կշռույթ, որ պայմանավորված է անշեշտ և շեշտված վանկերի համաչափ հաջորդությամբ, այսինքն՝ անդամների հատածները զրեթե վանկաքանակով միմյանց հավասար են և շեշտված ու անշեշտ վանկերի տեղերը հատածների մեջ համապատասխանում են և ըստ այդմ ունեն միևնույն ամանակը։

Բոլոր պարբերությունների առաջին մասերը այսպիսի ճշտությամբ չեն անդամահատվում և չեն կարող ունենալ այդպիսի համաչափ կշռույթային տարրեր։ Նույնիսկ չափածո խոսքի մեջ այդ իր բոլոր մանրամասներով հաճախ չի պահպանվում։ Անհրաժեշտություն չկա, որպեսզի պարբերության առաջին մասի անդամները այդքան ստույգ համամասնություն ունենան, անդամների նույն ներդաշնակ համաչափությամբ և ստույգ կառուցիկ դասավորությամբ թվարկվեն։ Բավական է, որ այդ անդամները քերականական համասեռությամբ միասնական, կդառնան պարբերության մաս։ Նկատի ունենալով պարբերության առաջին մասի անդամների հարակրկնությունները, վերջույթները, շարադասական միավորների զուգահեռ ու համապատասխան դասավորությունը, ամանակների ու կշռույթի կանոնավորությունը,— այս տեսակ մաս ունեցող պարբերությունը կոչում ենք չափակից պարբերություն, իսկ մյուսը, որի առաջին մասի անդամները այդպիսի ստույգ ու խիստ չափակցություն չունեն, դրան հակադիր, կոչում ենք անչափակից պարբերություն։

Այժմ տեսնենք, թե պարբերության առաջին մասը քերականական ինչ կառուցվածքներ է ունենում և ինչպես են արտահայտվում դրանք։

ա) Պարբերության առաջին մասը կարող է կազմված լինել տարբեր բնույթի երկրորդական նախադասություններից, որոնք թվարկվում են իբրև միասեռ անդամներ, իսկ երկրորդ մասը իբրև գլխավոր նախադասություն ամբողջացնում և փակում է ա.դ շարբը. օրինակ՝

Երբոր բացվին դոնեռն հուսո
Երբ մեր երկրեն փախ տա օմեռ,
Զմեղաղ երկիրն մեր Արմենիո
Երբ փայլե յուր բաղդրիկ օրեր,
Երբոր ծիծառն իր բույն դառնա,
Երբոր ծառերն հագնին տերև,—
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Ախարհ, որ ինձ ետուր արև (Ռուսինյան)։

Երկրորդական նախադասությունները կարող են լրացվել երկրորդական կարգի երկրորդական նախադասություններով, որոնք բարդացնում են պարբերության առաջին մասը, սակայն նրա բնույթը չեն փոխում։

բ) Պարբերության առաջին մասի բոլոր անդամները կարող են լինել բարդ ստորադասական նախադասություններ. օրինակ՝

Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կօսին.
Թե ջավայիր ասիմ՝ Մարեմեն կօսին.
Թե որ լուսին ասիմ՝ տարեմեն կօսին.—
Աբեգակի նման փարա իս, զոզալ (ՍՆ. 31)։

դ) Պարբերության առաջին մասը կարող է կազմվել դլխավոր նախադասությունների շարքից, որոնք փակվում են մի երկրորդական նախադասությամբ։ Այս երկրորդական նախադասությունը, ոչ թե առաջին մասի որևէ անդամի լրացում է, այլ լրացուցիչ է ամբողջ մասի համար և փակում, եզրափակում է այն ու ամբողջացնում. օրինակ՝ «Քահանան այս աշխարհականին բարեպաշտութենեն կը զողար, քարոզիչն ու թագական խորհուրդը կ'ակնածեին իրմե և դյուղացիս կը մեծարեր այս հավատացյալ աղան, որ իր բոլոր հարստության հակառակ աղքատի մը պես խոնարհ ու աստվածավախ կը թվեր» (ԳՁԵԺ, I, 268)։

դ) Առաջին մասը պարզ նախադասությունների թվարկվող շարք է, իսկ երկրորդ մասը այդ թվարկվող շարքը փակում է համադասական կապակցությամբ. օրինակ՝ «Փչում էր քամին, այրում էր արևը, անձրևն ու հեղեղները թրջում էին նրան, ամպերը դլխին որոտում, փոթորիկը նրան ժայռեժայռ խփում, կայծակը նրա շուրջը շանթիչ դծեր պարզում,—և սակայն ծառը հոտմառ անդրդվելի ելնում էր, ելնում և մշուշոտ բարձր կատարների ձդտում» (ՎՓԸԵ, 288)։

ե) Առաջին մասը կազմվում է նաև միավորյալ նախադասություններից, իսկ երկրորդ մասը դրանց հետ կարող է կապվել կամ համադասական, կամ ստորադասական կապակցությամբ. օրինակ՝ «Եթե արդ զի՞նչ գործեսցես. անձն իմ կորուսեալ, կամ ո՛ւր թաքիցես, կամ զիարդ ապրեսցիս, կամ ո՞րպէս ելցես ի մեղաց բանտէ,—քանզի բազում են պարտիքդ, և անթե՛ւ հատուցմունք» (ԳՆ, 8)։

Երենեկ էսպես՝ անվերջ ՀԵՂ հետ՝ իմ կյանքի հետ լինեի.
Հազար երենեկ՝ դաշտում մենակ՝ Երկնքի հետ լինեի.—
Բայց ով կուտ էն վայելքը՝ ինքս ինձ էլ չզգայի.
Ու հալվեի ծավալվեի. ամենքի հետ լինեի (ՀԹԵԺ. I. 212)։

զ) Պարբերության առաջին մասը կազմվում է դերբայական դարձվածների շարքից, որոնք ընդհանրացվում են երկրորդ մասով. այդ դեպքում երկրորդ մասը ունենում է ընդհանրացնող հատուկ բառեր ու կապակցություններ, որոնք հենց որոշում են պարբերության երկու մասերի սահմանները. օրինակ՝ «Հետին միջատին կյանքը ճանչնալ ու կարող ըլլալ միանդամայն ամենն աչքերու անտես լուսավոր դունտի մը համակ շավիղը ճշտել երկնից մեջ. անհունապես փոքրը ու անհունապես մեծը ըմբռնել, հիմիկուց դիտնալ անցյալը, որ խավարն էր, ներկան, որ ստվերն է և ապագան, որ լույսը պիտի ըլլա,—ոչ, այս ամենը մեկանց պիտի չուզեր տեսնել միակ մտքի մը մեջ» (ԳՁԵԺ, I, 437)։

Դերբայական դարձվածները իբրև առաջին մասի անդամներ երբեմն հանդես են դալիս բառակապակցությունների հետ միասին. այս դեպքում անդամների համասեռության իբրև պայման առկա են լինում հարակրկնությունները (ամեն անդամի սկզբում նույն բառը կրկրնվում է), անդամների համամասնությունը, շարադասական զուդադրությունները, կշռույթը և այլն. օրինակ՝ «Ոչ բարձրաձայն խոսակցությունս, որուն ակամա ունկնդիրն էր, ոչ վրդովյալ շարժուձևերս, ոչ իրեն ուղղած համառ ու բոցավառ նայվածքս,—ասոնց և ոչ մեկը կրդավ իր դեղեցիկ մարմարե արձանի վայելուչ անտարբերությանը հաղթել» (ԳՁԵԺ, I, 157)։

է) Դերբայական դարձվածներին հար և նման պարբերության առաջին մասի համար անդամներ են դառնում բառակապակցությունները, որոնք դարձյալ երկրորդ մասի որևէ ընդհանրացնող բառով եզրափակվում, ընդհանրացվում են։ Փաստորեն դերբայական դարձվածներով կամ բառակապակցություններով կազմված պարբերությունները իրենց ընդհանրացնող մասի հետ միասին մի պարզ նախադասություն են կազմում, սակայն այդ երկու մասերը տարբեր հընչերանգներով և ուժդին դադարով այնպես են տրոհվում միմյանցից, որ առաջին մասը չի դիտվում իբրև երկրորդ մասի լրացում, ընդհակառակն, երկրորդ մասը դիտվում է իբրև ընդհանրացում ու եզրակացություն առաջին մասի համար։ Այստեղ պարբերություն կազմելու համար մեծ դեր են կատարում ընդհանրացնող բառերը, որոնք երկրորդ մասը առանձնացնում են առաջին մասից և երկուսի համար ապահովում են պարբերության հավասարազոր մասեր լինելու պարագան։ Իսկ եթե ընդհանրացնող բառերը պակասում են, առաջին մասի հավասարազորությունը թուլանում է և արդեն դա երկրորդ մասի համար լրացման տպավորություն է թողնում, չնայած որ երկու մասերի համար տարբեր հնչերանգային արտաբերումն ու դադարը

որոշ չափով ասկա են. օրինակ՝ «Փոխանակ դդջալու, փոխանակ դարձի գալու, փոխանակ բարությամբ կրկին դրավելու նրանց սերն ս. հարդանքը,—դու սկսեցիր բռնություն գործ դնել» (ԲԽԺ, VII, 524)։ Եթե առաջին մասի թվարկվող անդամներից հետո երկրորդ մասը սկսվեր այսպես՝ այդ բոլորի փոխարեն դու... ահա այս դեպքում այդ բոլորի փոխարեն ընդհանրացնող կապակցություններ դառնում է երկրորդ մասի համար մի տեսակ փոխարինող լրացում, իսկ առաջին մասի թվարկվող անդամները դառնում են լիիրավ մաս պարբերությունը ձևավորելու համար։ Ահա բառակապակցություններով առաջին մասի օրինակ. «Ոչ հոգիի և ոչ մտքի պատշաճություն երկուքին մեջ. ոչ կրթության և ոչ զգացումի ներդաշնակություն. ոչ տարիքի և ոչ մարմնի հարմարություն,—այլ բիրտ հպումը, անմեկնելի ու հավիտենական մերձեցումը, ավելի բիրտ քան այն զույգ մը եղջիր, որ արորի մը կը լծվի և ուր գոնե զույնի, տարիքի, ույժի ներդաշնակություն կը փնտրվի» (ԴՀԽԺ, I, 147)։

բ) Պարբերության առաջին մասի անդամներ կարող են դառնալ նաև մի եղանակավոր բայից կախված թվարկվող անորոշ դերբայները իրենց դարձվածային ձևավորվածությամբ, ուր առաջին անդամի հետ եղանակավոր բայը հիշատակվում է, իսկ մնացածները թվարկվում են առանց դրա. օրինակ՝ «Փորձեցի փոքր ինչ մնալ անշարժ, աչքերս փակել, նորից ծովի շշուկին ականջ դնել, նրանով օրորվել, մոռացության մեջ ընկղմվել,—բայց անկարելի եղավ» (ՎՓԸԵ, 386)։

Այս նույն ձևով մի դլխավոր նախադասությունից կախված համասեռ խնդիր նախադասությունները նույնպես պարբերության առաջին մաս են կազմում, եթե երկրորդ մասը ձևավորվում է իրրև այդ միավորյալ անդամները ամրողջացնող, ընդհանրացնող մաս կամ իրրև հակադրություն. օրինակ՝

Նրանք ասում են, որ դու անցել.
Ու ճնազել ես, ու ճեռացել,
Ու լմել են քեզ ու մոռացել
Օրերում այս խենթ ու դարձդարձիկ.—
Բայց տես՝ կանչում է ահա մի ձեռ
Եվ մի սիրտ, որ քեզ սիրում է դեռ (ԵՁԸԵ, 192)։

գ) Պարբերության առաջին մասի համար իրրև անդամներ կարող են հանդես գալ անորոշ դերբայով կառուցվածքներ, որոնք ընդհանրացվում են երկրորդ մասով իրրև ենթականեր, խնդիրներ կամ նախադասության այլ անդամներ. օրինակ՝ «Երկյուղ տալ երեխային դեմ, շար սատանայի, ալքերի, խլվլիկի, մարդադայլի, գերվիշի և այլ սարսափելի անուններով, և միևնույն ժամանակ հրապուրել նրան աստուծո, հրեշտակների և սրբերի խոստումներով,—այդ բոլորն ավելի նուրբ միջոցներ են երեխային կրթելու համար» (ԲԽԺ, IX, 390—391)։ Այս դեպքում անդամների թվարկվող միավորները նույնպես նպաստում են պարբերության առաջին մասի ձևավորման։

դ) Պարբերության առաջին մասի համար իրրև անդամներ հանդես կարող են դալ միավորյալ ենթականեր. այս դեպքում դրանք բազմանդամ պետք է լինեն և հետո վերջում պետք է ունենան ընդհանրացնող բառ կամ բառակապակցություն։ Երբ այս վերջինները չկան, ապա երկմասնության հնչերանգը թուլանում է և ամբողջը թողնում է պարզ նախադասության տպավորություն. օրինակ՝

Հայրենիքիդ ծառ ու ծաղկունք.
Ցար ու քարափ, խոր ձորեր,
Անմահական անուշ ակունք,
Արագածի քաղցր հովեր.

Ճիճակաների շարն ու բարին.
Ուրախություն, դարդն ու ցավ,—
Եվ տվեցին քո հանձարին,
Կարող վրձին շարժվեցավ (ՀՀՀ, 100)։

Եթե երկրորդ բառասան երրորդ տողը սկսվեր և այդ ս:մներ կամ՝ դրանք, բոլորը և այլ բառերով, ապա այդ կլիներ իսկական պարբերություն. չնայած հեղինակը մի շարք ենթակաները կուտակել է մի քառատողում, այսինքն՝ վերատորեն անդամահատել է և երկրորդ քառատողում էլ եղած ենթակաները գծով բաժանել է ստորոգյալից, այնուամենայնիվ լրիվ պարբերություն չի

ստացվել։ Համեմատիր վերևի հետ հետևյալ օրինակը. «Պապը հիմա որ կողմը դառնում էր՝ ամեն ինչ, յուրաքանչյուր մի իր, յուրաքանչյուր առարկա թե կարասի, գենք թե գորգ,—բոլորը, բոլորը հիշեցնում էին հորը կամ մորը և իր պատանեկության օրերը» (ՍԶՊԹ, 88)։

ժա) Այդպես էլ նախադասության այլ անդամներ կարող են դառնալ պարբերության առաջին մաս, երբ նրանք մասնատվում և հակադրվում են երկրորդ մասին. օրինակ՝

Ոչ շղթաների դաժան բեռի տակ, ոչ փուչ պոռակով
Եվ ոչ ծանր խաչ կոբացած ուսին.—(այս բաժանումն հեղինակինն է)։
Նա աշխարհ կգա մի նոր զորությամբ և մի նոր փառքով.
Բախտի պայծառ ճանն անհողդողդ ձեռին (ՀՀՀ, 158)։

Առաջին մասը ձևի պարագաներից է կազմված, որոնք մասնատված են իրենց լրացյալից ոչ միայն հնչերանգով, այլև երկրորդ մասի հակադիր ձևի պարագաներով։

ժբ) Պարբերության առաջին մասի հիմնական անդամները կարող է լինել միևնույն կրկնվող ենթական, որ ունի լրացուցիչ երկրորդական նախադասություններ. փաստորեն այդ ենթակայի հետ միասին երկրորդական նախադասությունները դառնում են առաջին մասի անդամներ, իսկ երկրորդ մասը հիշյալ թվարկվող ենթակաների ստորոգյալն է, որ փակում է ամբողջ թվարկվող շարքը։ Այսպիսի պարբերությունը մի բարդ նախադասություն է՝ մի շարք միջադաս երկրորդական նախադասություններով, բայց երկրորդական նախադասությունները պարբերության մաս են կազմում, մեկ որ բաղմական են և ունեն միևնույն անդամանատությունը և երկրորդ՝ միշտ գլխավոր նախադասության ենթակայի հետ են հիշատակվում իբրև միասնական մի անդամ. օրինակ՝

Դու որ մատղաշ տարիքիս
Հարսանեկան ոգոս արյունով ներկեցիր
Եվ բույլ տվիր՝ որ բեռուս վրա ջարդեն
Լուրջ հոգեմեռս բնիկ հոգով բռնված.
Դու որ այս ծեր տարիքիս մեջ տակավին
Երիկամանքս լոկ մաղցով լեցուցիր
Եվ սրբազան ցույցը մեկնող հասակիս
Թարախեցիր արյան մեջ,
Դու որ ուղվույզ խաչն ողբալեն բլշակնած
Իմ աչքերս այս սահմանեցիր դեռ լալու
Մորթված յորը գավակ,—
Դու՝ դեռ վիշտդ երկնածին
Երկու բարեր երկու ամպի վրա դրած.
Մոռ և տես՝ ողորմությանդ ստությունն
Հոն վարը, տես (ԹՎԲ, 132—133)։

Այսպիսի կազմությունները կատարյալ պարբերություն են մասնատվում այն դեպքում, երբ առաջին մասի կրկնվող ենթական հիշատակվում է նաև երկրորդ մասում, որով հենց երկրորդ մասը լրիվ հանդես է գալիս իբրև առանձին հնչերանգային իջնող մաս. համեմատիր հետևյալ օրինակը. «Ամեն ինչ, բնության տեսարանը, մարդկային դպացումը, քաղաքի սիլուետը, նոտիներու սլացումները, մուեզինին աղոթքը,—ամեն ինչ միայն իրենց բարձրագույն կերպարդության կհասնին, այլև կխառնվին իրարու հետ» (ՁԵՆ, 137)։

ժգ) Պարբերության առաջին մասը կարող են կազմել այնպիսի համասեռ երկրորդական նախադասությունները, որոնք կախված են մի գլխավոր նախադասությունից, որը, սակայն, երկրորդ մասի սկզբում կրկնվում է և կարծես սկսում է մի նոր գլխավոր նախադասություն իր հնչերանգային ամբողջությամբ. օրինակ՝ «Դժվար է, երբ կիրքերը այսքան բորբոքված են, երբ քաղաքական բնույթ ունեցող հարցերը անմիջական և վառակոտ նշանակություն են ստացել, երբ մարդիկ օրը օրին կապրին առանց հետ նայելու և առանց իրենց միտքը սևեռելու ապագայի հորիզոններուն,—դժվար է ոչ միայն մարդիկ գրաչեցնել արվեստով, այլ նույնիսկ ամփոփվիլ և անխառն հաճույքով անձնատուր բլլալ մեր երգին» (նույն տեղում, 142)։

ժդ) Այդպես էլ նախադասության այլ անդամներից կախված երկրորդական նախադասությունները կազմում են պարբերության առաջին մաս, եթե այդ անդամը երկրորդ մասում կրկնվում է իբրև սկիզբ հիշյալ մասի՝ օրինակ.

Այս Բաղամում, ուր ցոփ արքաներ են ապրել,
Ուր շաչել է մարակը ստրուկների վզին,
Որպես մերին պարզ, ուր հյուսիսի
Մառախուղի նման այս անտարբեր
Իշխաններն են դարեր առևանգել, հարբել,
Կախաղաններ կանգնել հարյուրներով,—
Այս Բաղամում հիմա նոում է կյանք մի նոր,
Զարմանալի մի կյանք (ԽՁԲԵ, 183):

Այս նախադասությունները կամ բառերն ու բառակապակցությունները, որոնցից կախված են առաջին մասի անդամները, հենվում են պարբերության երկրորդ մասի վրա. հիշտ է, դրանք առաջին մասի անդամների հետ փաստորեն միասնաբար են հանդես գալիս, բայց անդամ չեն համարվում։ Պարբերության հնչերանգային սկիզբը թվարկվող անդամից է սկսվում։ Փաստորեն այդպիսի նախադասությունները, բառերն ու բառակապակցությունները երկու մասերի ամբողջացման համար կապակցող, միջնորդավորող դեր են կատարում։

ժե) Պարբերության առաջին մասի համար իրրև անդամներ են հանդես գալիս նաև թվարկվող բաղմաղան այնպիսի կոչականներ, որոնք կիրառվում են ոչ թե նրա համար, որպեսզի նրանց գիմենք ինչ-որ գործնական նպատակով մի խոսք ասելու, այլ բերվում են իրրև թեմային տարբեր նրանց վերաբերող խոսքը առաջ տանելու համար։ Այդպիսի կոչականները սովորաբար ուղեկցվում են զանազան լրացուցիչ բառերով ու բառակապակցություններով և հաճախ նույնիսկ որոշիչ երկրորդական նախադասություններով։ Այդպիսի կոչականները կամ դառնում են իրրև ենթակա թվարկվող այդ շարքից հետո եկող երկրորդ մասի համար և կամ էլ երկրորդ մասը դրանց ուղղված որևէ խոսք է. օրինակ՝

Դուք՝ պալատական, դուք՝ սուղարեր
Դժնի դպրության կորդներ ոին,
Թշնամի կյանքին, սրտին, լույսին,
Հանուն սրբության անեղծ կույսի՝
Քերթողներ կրքի ու տոփության,—
Դուք չեք այսօրվա մեր դպրության
Դարերից հոդող գետն այն փարթամ,
Որ դեռ հավիտյան պիտի երթա (ԽՁԲԵ, 242):

Ինչպես տեսնում ենք այս բաղմաղան օրինակներից, պարբերության ձևավորման համար կարևոր է առաջին մասը. մինչև որ այն չկազմակերպվի իրրև համասեռ անդամներից կազմված որոշ չափակցություն ու կշռույթ արտահայտող և հնչերանգորեն բարձրացող շարք, պարբերության մաս չի կարող կազմել։

Բայց պետք է ասել, որ ինչքան էլ առաջին մասը իր բոլոր հատկանիշներով կազմակերպված ու ձևավորված լինի պարբերության պահանջներին համապատասխան, առանց երկրորդ մասի ներկայացնում է թվարկվող անդամների անավարտ շարք, որ մնում է բաց, իսկ պարբերության հատկանիշներից մեկը փակ լինելն է, մի բան, որ կատարվում է երկրորդ մասով. սա է, որ փակում, եզրափակում և իմաստային ու կառուցվածքային առնչություններով ավարտուն է դարձնում արտահայտությունը և թվարկվող շարքը կլորացնում, շրջանակում ու նրա հետ միասնաբար կազմում է պարբերությունը։

Կառուցվածքի կողմից երկրորդ մասը ձևավորվում է ըստ առաջին մասի. եթե առաջին մասում թվարկված են այս կամ այն տիպի երկրորդական նախադասություններ, ուրեմն երկրորդ մասը դրանց համապատասխան մի դիտավոր նախադասություն է. օրինակ՝

Երբ բլուրն ի վար
աղբյուրեն դարձին
իր վարսի խուրձին
մեջը սողոսկի
նուրբ մատիկն ոսկի
արևի լույսին,
հիր սափորն ուսին
Երբ բլուրն ի վար
աղբյուրեն դարձին
մեղմով ծածանի
լաչակն հողմավար՝
թևով բոչունի.
ու ծիածանի
բույրով սասաղա
աչքն իր գեղանի.
և երբոր ցնծա
ճնշյուններ՝ ծնծղա
զարդոսկիներուն,—
տենչանքով անհուն
հոգիս պիտ բղձա
գանձեր, գոր չունի (ՄՄԵԻ, 82):

Այս օրինակի մեջ ժամանակի պարագա չորս նախադասություններ փակվում են «տենչանքով անհուն հոգիս պիտ ըղձա դանձեր» գլխավոր նախադասությամբ։

«Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակ-տարածությունը, իմ հոգու դրսևորումն է նա և իմ կամքի ու մտքի առարկայացումը,—ապա ուրեմն ես հզոր եմ մահից ու անմահ է իմ ներս» (ԱԻԵԺ, III, 218)։ Առաջին երեք նախադասությունները պատճառի պարագա երկրորդական նախադասություններ են, իսկ վերջինը գլխավոր է, որ արտահայտում է եզրահանգում։

Եթե առաջին մասի անդամները գլխավոր նախադասություններ են, ապա երկրորդ մասը այդ բոլորը լրացնող որևէ տիպի երկրորդական նախադասություն է. օրինակ՝

Հիմա ելնում ենք մենք մեր կաշվից,
Հիմա հոգնում ենք, ոնոում անհուն,—
Ու մեր գեղուն այն հիմար Զանգուն
Քիլվատներ ու վոյլաներ հաշվի (ԵՁԸԵ, 107)։

Պարբերության երկրորդ մասը կարող է լինել համադասական բարդ նախադասության մաս, եթե առաջին մասի անդամները միավորյալ կամ թվարկվող համադասական նախադասությունների շարք են կազմում. օրինակ՝ «Մենդարիությունից միայն կես ժամ առաջ նա հրաժարվում էր աշխատելուց, գեմքի վրա հազիվ նշմարվում էր ցավագին ինչ-որ ծամածռություն, ապա ժպտում էր ջինջ, գնում առանձնանում, բռնում կողերը,—և ահա ծնված էր լինում մեղանից մեկնումեկը» (ՎԹԵ, 26)։

Ես Երազեցի աբեի ոսկին,
Տենչացի նրա հրաշք խնդուն,
Ուզեցի սիրել չշուկն իմաստուն
Արևանման, աբեավառ խոսքի,—
Բայց շուչս այնպես գունատ էր, տկար,
Խոսքեր չկային ու աբեի չկար (ԵՁԸԵ, 137)։

Երկրորդ մասը կարող է լինել բարդ ստորադասական նախադասություն, որ նախորդ մասի հետ առնչվում է համադասական կապակցությամբ. օրինակ՝ «Բակին և պարտեզին գոները, կբացվեին, վարագույրները կուռեին և կշաչեին առագաստներու պես, դրացիները համարձակություն առած՝ կմտնեին կելլեին, մորաքույրերս կհազվեին, կքսվեին և տեսակ մը անկախության ձգտում կստանային,—բայց ինչ որ սմենեն զարմանալին ու հրաշալին էր, այն էր, որ մեծ մայրիկիս տխուր կնճռոտ գեմքին վրա ժպիտ կերևեր» (ՁՆՆ, 450)։

Հաճախ պարբերության առաջին մասի թվարկվող անդամները արտահայտում են առանձին մտքեր, որոնք միավորվում են քերականական համասեռությամբ, իսկ երկրորդ մասը այդ առանձին մտքերի ու արտահայտությունների ընդհանրացումն է իբրև մի ամբողջություն. օրինակ՝

Դեմ տեսա՞ծ եմ հայրենի լեռներ մեր իրոխտապանծ
Պսակված՝ ամպի մեջ բուսնող անտառներով անթափանց,
Ձոր կը հոտեն լոկ շանթերն, ու լոկ հեղեղը գեղին
Հոտված ծառերը մինչև կը բերեն մոտը գյուղին.
Դեմ տեսա՞ծ եմ կիրճերու խորն անձավներ, որոց մեջ
Կ'ապրին (կ'բսեն) ջատուկներ կբելով էգ գայլ մ անվերջ,
Եվ որոնք մերթ լուսնին տակ երգելով երգ մ'հրապուրիչ
Վար կը կանչեն սարին վրա նստող կովարծը կտրին.
Դեմ տեսա՞ծ եմ մարգագեղ անձայրածիր արոտներ,
Ուր զառնուկներ կարածին թիթեռներու արքաներ,
Ուր կը սահի արևուն միահնձան փառքին տակ
Գետակ մը ջինջ՝ կաթի պես և եղկ անոր հանգունակ...,—
Անավասիկ այս բոլորն, այս պատկերները խուժդուժ
Իր հեքիաթներն էին նախ՝ երգված սրտին մեջ անուշ (ԴՎԲ, 190)։

Այս հատվածը, որ կրճատել ենք ընդարձակ լինելու պատճառով, մի պարբերություն է։ Անդամների մեծ ծանրաբեռնվածությունը որոշ չափով դանդաղեցնում է հնչերանգային հաջոր-

ական լարվածություններ, ուստի թվում է թե անդամները անջատ միավորներ են, բայց որովհետև միշտ առկա է հարակրկնություններ (դուք) և մանավանդ այդ ամենը բնդհանրացնող («ահավասիկ այս բոլորն...») եզրափակիչ մասը, այս բնդարձակ հատվածը դառնում է իսկական պարբերություն։

Երկրորդ մասը կարող են կազմել նաև երկրորդական նախադասություններից առաջացած կերբ-յական դարձվածներ, եթե վերջում դրանք հնչերանգով անջատվում են առաջին մասից և կազմում են հակադիր կամ զուգադիր մաս. օրինակ՝ «Երբոհ է տալիս ու մերկում բյուրավոր զոհեր տալով՝ խորտակելու բոլոր պարիսպներն ու բանտերը բռնության, խորտակելու բոլոր բուրգերն ու բերդերը դրամապետության, խորտակելու համար բոլոր լուծերն ու շղթաները ազգատության և ստրկության,—ստեղծելու համար ազատության իրավունքի, մարդավայել աշխատանքի և արդար վայելքի լուսակերտ աշխարհը դարավոր Շանդ-Շենգի փլատակների վրա» (ԱԻԵԺ, III, 253)։

Այս պարբերության առաջին մասի միավորյալ անդամները սկսվում են խորտակելու ձևի հարակրկնությամբ, որոնք կախված են «զրոհ է տալիս ու մերկում» նախադասությունից. իսկ երկրորդ մասը սկսվում է «ստեղծելու համար...», որ հակադրվում է նախորդին իմաստով և հնչերանգային անկախությամբ։ Եթե առաջին մասի միավորյալ անդամները արտահայտվեին ամբողջական նախադասություններով, ապա երկրորդ մասը կդառնար լոկ նպատակի պարագա և ոչ թե պարբերության մաս։ Բայց քանի որ քերականական ձևավորվածությամբ նրանք միևնույն աստիճանի վրա են գտնվում, բայց իմաստով ու հնչերանգով հակադիր ու անկախ են, ապա միասին կազմում են մի պարբերություն։

Պարբերության երկրորդ մասը երբեմն ձևավորվում է առաջին մասի սկզբի որևէ նախադասությամբ կամ բառակապակցությամբ, որը տվյալ դեպքում կարևոր է առաջին մասի համար. սա առաջին մասի իմաստային կենտրոն է կազմում։ Այդպիսի նախադասությամբ կամ բառակապակցությամբ սկսվող երկրորդ մասը սվելի սերտ է կապվում առաջին մասի հետ, և ամբողջացման բմբռնումը առավել որոշակի է։ Կրկնվող այդ նախադասությունը կամ բառակապակցությունը առաջին մասը օղակաձև շրջանակում է և սկսվում է երկրորդ մասը. օրինակ՝

ԱՅՆ ԱՓԵՐՈՒՄ, ուր դու, օ, տարիներ առաջ,
Թափառելով՝ սիրո երգեր էիր գրում
Եվ զուրգուրում, իբրև սերունդների երազ,
Այն, որ քաղված մնաց մեզ գրքերում,—
ԱՅՆ ԱՓԵՐՈՒՄ հիմա մի բարբառոս հովիվ,
Երազելով մեզ պես կնոջ զգվանք ու սեր,
Ունկնդրում է միայն շշուկներին հովի
Եվ, երգերի տեղ մեզ, երգում տնքաղ մի շեր (ԵՁԸԵ, 252)։

Պարբերության երկրորդ մասը կարող է բարդանալ տարբեր լրացուցիչ նախադասություններով, նույնիսկ ինքն իր հերթին կարող է դառնալ պարբերությունային մի կազմություն, ըստ կառուցվածքի նմանվել պարբերության, սակայն քանի որ այն ինքնուրույն ոգիր չունի (կառուցվածքով և հնչերանգով կապված է առաջին մասի հետ), ապա անկախ պարբերություն չի կարող համարվել։ Դա պարբերության երկրորդ մասն է, միայն արտահայտվում է բազմամարդ ձևով. օրինակ՝ «Ես կարծում եմ ոչ հոր եղեռնական մահը, ոչ մոր շուտափույթ ամուսնությունը, ոչ հորեղբոր ազդապիղծ վարմունքը, ոչ Օֆելիայի թեթևամտությունը, ոչ Պոլոնիուսի պալատական նենգավորությունը,—ոչինչ, ոչինչ Ենքան վիրավորական չպետք է լինեն դժբախտ Համլետի՝ էն առաջին ինտելիգենտի հոգու ազնվության, արքայազնի վեհության, փիլիսոփայի խորության, հանճարեղ երրամտության ու վշտի ծանրության համար, որքան հայ դերասանի անճաշակ լալկանությունը, վախկոտ հայացքները դես ու դեն, անմիտ վազվզելը պատից պատ, անտեղի ազազակները ու լաց ու կոծը կամ ռուս դերասանի հիստերիկ հեկեկոցները ու հոհոցները, հիվանդագին գայթումները, սենգաղար ծամածռությունները ու գոռում-գոչումները» (ՀԹԵԺ, IV, 114)։

Պարբերության երկրորդ մասը առաջինի հետ կապակցվում է շաղկապներով, շաղկապային ու բնդհանրացնող բառերով և կամ առանց դրանց։ Շաղկապներով կապակցվող մասերը արտաքնապես հեշտությամբ զատվում են միմյանցից. օրինակ՝ «Հրաչը սիրում էր եղրորը, եղբայրը նրա օրորոցն էր օրորել, տարել էր պարտեզները ման էր ածել, պատանեկության իր պատասխանատվությամբ նրան այգիներ էր տարել, դասն էր սովորեցրել, փողոցը թշնամի-

տղաներից պաշտպանել, ինչ որ տնից թոցրել էր, նրան էր տվել, նրա համար թոռցիկ էր շինել, լողալ էր սովորեցրել,—բայց Վերոնիկայի մաղի մի թելը մոռացրեց այդ բոլորը և հանկարծ մի օր Հրաչը դաղարից Վահրամի հետ խոսելուց» (ՎԹԵ, 79)։

Երկրորդ մասը կարող է առաջին մասի հետ կապակցվել առանց շաղկապի. այս դեպքում մասերի տարբերման համար հիմք են ծառայում քերականական կառուցվածքի զանազանությունը, բարձրացող և իջնող հնչերանգները, իմաստային հակադրությունը, զուգադրությունը, փոփոխությունը. օրինակ՝

Աստղ ու նկար շորեր հագած՝ զեմս ելար Երազի պես.
Էշխդ կրակ սիրտս էրեց անհասնելի սուրազի պես,
Անուշ հոտով սիրտս լցրիր վարդաստանի, Ճիրազի պես.—
Ինչ էլ բլի էշխդ. գյոզալ, երգս ուրախ պիտի ասեմ (ԵՁԸԵ. 159)։

Էրած խորված մանի իմ զայի. մե տիզ չը կա մար ունենամ.
Լիզվով չիմ կանացի ասի, թեզուզ խոսկրս փար ունենամ.
Ափսուսալու հազար ափսուս, յիս էս զաղա դար ունենամ,—
Էշխեն ուշկ ու միտկրս կապած, ինձ ջրի տարած գիտենամ (ԱԼ. 70)։

Երկրորդ մասը առաջինի հետ կապակցվում է նաև միջնորդական կապերով, այսինքն՝ առաջին մասի որևէ անդամ կամ հատած կրկնվում է երկրորդ մասի սկզբում և դառնում է երկու մասերի կապակցման միջնորդ։ Սա տարբերվում է սղակաձև կառուցվածքից նրանով, որ վերցվում է ոչ թե սկզբի անդամը, այլ առաջին մասի որևէ անդամ կամ հատած, որ տվյալ դեպքում էական է թե առաջին մասի և թե մասերի ամբողջացման տեսանկյունից. օրինակ՝ «Իրիկնայույսին ծիրանի ծվուն մեջ կդգիացած արտասվող ուռիներու շարքին տակ, հովիտին խորը, ահավասիկ իմ երգս արոտներուն շունչովը լեցուն. ահավասիկ իմ երգս առվեզերքի անուխին ու ոնհանին խունկովը օծուն. ահավասիկ իմ երգս, հնձված արտերուն ու հերկված հողերուն բույրովը, արևեփ խաղողներուն ու մեղրացած թուզերուն անուշությամբ ակաղձուն,—իմ երգս՝ իդձի մը, արցունքի մը պես պարզ ու վճիտ, որ իրիկվան ոսկի հրեշտակին հետ թև առած կը թռչի սարերն ի վեր, կապույտն ի վեր» (ՄՄԵԺ, 211)։

Մինչև այստեղ մենք խոսեցինք բարձրացող հնչերանգ ունեցող պարբերության մասին, այսինքն՝ այն պարբերության մասին, որի թվարկվող անդամները իրենց բարձրացող հնչերանգով գանվում են առաջին մասում, իսկ երկրորդ մասը միայն իջնող հնչերանգ ունի։ Սակայն լինում են նաև այնպիսի պարբերություններ, որոնց թվարկվող անդամները իրենց բարձրացող հնչերանգով տեղադրվում են երկրորդ մասում։ Այս դեպքում առաջին մասում կարող է լինել մի գրեթե խավոր նախադասություն, իսկ երկրորդ մասը երկրորդական նույնասեռ նախադասությունների շարք, որոնք թվարկվում են բարձրացող հնչերանգով. օրինակ՝ «Ոչ ոք այլևս չէր մտածում, թե շահը դեռևս հյուր է Ազուլիսում, թե ամեն ոք պարտավոր է լուսավորել յուր տուն, կտուրն ու սարավույթը, թե պետք է բակերում խարույկներ բորբոքել և ընկեր, հարևան դրանց շուրջը ժողոված մինչև կես գիշեր խրախություններ անել, թե ժողովուրդը խմբերով փողոցները պիտի պտտեր և փողերով, թմբուկներով օդը թնդացներ, թե միով բանիվ ամեն ոք պարտավոր էր մասնակցել որևէ հրապարակական զվարճության» (Մուրացան, V, 303)։

Այս օրինակը լիովին բավարարում է պարբերության պահանջները, որովհետև թվարկվող շարքի վերջին անդամը ընդհանրացնում և փակում է թվարկվող շարքը։

Առաջին մասում կարող է լինել մի համադասական նախադասություն, իսկ երկրորդ մասը նույնպիսի նախադասությունների թվարկվող շարք. օրինակ՝ «Համաշխարհային աղետայի պատերազմի ընթացքում շատ տոներ եկան ու անցան չտոնված,—բայց էս մի տոնը պետք է տոնի ամբողջ կուլտուրական աշխարհը. պետք է տոնեն և պատերազմից հետո կանգնած ժողովուրդները իրենց խաղաղ քաղաքներում, և կռվող ազգերը իրենց խրամատներում, և անգլիացին, որ Շեքսպիր է ծնել, և գերմանացին, որ Շեքսպիր է սիրել ու որդեգրել, և ռուսը, և ֆրանսիացին, և իտալացին, և ավստրոհունգարացին՝ ամենքը, ամենքը մինչև ուր հասել է Դոնքիշոտի ազնիվ խելառության համբավը, մինչև ուր հասնում է Շեքսպիրի աստվածային բոնակալությունը, որ մարդկային հոգին ազատագրելով ամեն տեսակ բռնակալություններից՝ միայն ստեղծագործական ոգու իշխանությանն է ենթարկում» (ՀԹԵԺ, IV, 333—334)։

Այս կարգի պարբերությունները, որ սակավ են և առանձնապես չեն նշվում, ունեն այլ տիպի հնչերանգ. առաջին մասը եթե բազմանդամ չէ, արտաբերվում է իջնող հնչերանգով, իսկ երկ-

որդ մասը թվարկվում է մինչև վերջին եզրափակող անդամը բարձրացումով. եզրափակող անդամը արտաբերվում է թեթև իջնող և փակող հնչերանգով։ Պետք է շեշտել նաև, որ եթե թվարկումը չի ընդհանրացվում կամ փակվում որևէ ձևով, այդպիսի կառուցվածքները պարբերություն չեն, որովհետև պարբերության հիմնական պայմաններից մեկն էլ փակվածությունը՝ ավարտունությունն է։ Երբ թվարկումը վերջում առկախ և բաց է մնում, այսինքն՝ որևէ ձևով չի մատնանշվում թվարկվող շարքի ավարտը, բարձրացող հնչերանգը կտրվում է առանց իջեցման և արտահայտությունը մնում է անավարտ, չի կլորացվում, ուստի և պարբերություն չի կազմում։ Թվարկվող շարքի ավարտուն լինելը նշվում է ոչ միայն ընդհանրացնող, եզրափակող բառերով, այլև շաղկապներով ու բովանդակությամբ։ Վերևում բերված Մուրացանի օրինակը ընդհանրացվում է միով բանիվ կապակցությամբ, Թումանյանները ամենը, ամենը ընդհանրացնող կրկնությամբ։

Շատ ուսումնասիրողներ այս կարգի պարբերությունները համարում են պարբերությային կառուցվածք, ընդ որում եթե վերջին մասի թվարկվող անդամները այս կամ այն ձևով չեն մատնանշում ավարտը, կոչվում են բաց պարբերությային կառուցվածք։ Նշելով նաև այս կարգի կառուցվածքներից շատերի պարբերությային կազմությունը, մենք նույնպես հակված ենք կարծելու, որ պարբերության բաղմանդամության ծանրության կենտրոնը վերջ ի վերջո ընկնում է առաջին մասի վրա և բուն պարբերությունները բնութագրվում ու պայմանավորվում են այդ առաջին մասի բաղադրականությամբ։ Երկրորդ մասի միավորականությունը, կառուցիկ համաչափությունը, անդամների ներդաշնակ ու կշռությամբ թվարկումը էական չեն պարբերության համար։ Երկրորդ մասը էական է այնքանով, որքանով այն ընդհանրացնում, եզրափակում ու փակում է առաջին մասի թվարկվող շարքը միանդամայն այլ քերականական կառուցվածքով ու հնչերանգով։ Առաջին մասը հարում է երկրորդ մասին իմաստով, քերականորեն և հնչերանգով, այդպիսով ստացվում է մի ավարտուն ամբողջականություն։ Երբեմն այնպես է պատահում, որ առաջին մասի թվարկվող շարքը ամբողջացվում է երկրորդ մասի թվարկվող շարքով, որով առաջանում է մասերի հակադիր համամասնություն. այսպիսի կառուցվածքը աչքի է ընկնում իր չափակցությամբ, կշռությային զուգահեռականությամբ, ուստի զուտ հնչերանգային ու ոճաբանական արժեք ունի. քերականական տեսանկյունով դա պարբերության մեջ էական փոփոխություն չի առաջացնում։ «Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին՝ էնպես էր մեյդան բաց արել դռոում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար դլխով տալիս,— որ ճամփորթի քիթ ու պռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, դլխին, երեսին հաղար անդամ խփում, աչը ու բերանը լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու դլուխ փետացրած՝ ճամփից խոկում, սար ու չոլ դցում, խեղդում կամ քարեքար տալիս» (ԽԱՎՀ, 10)։ Այս օրինակի մեջ առաջին մասը լրիվ բավարարում է պարբերության պահանջները. հինդանդամանի է և կազմված միավորյալ նախադասություններից, որոնք դլխավոր են. իսկ երկրորդ մասը հետևանքի երկրորդական միավորյալ բաղմանդամ նախադասությունների մի մեծ շարք է։ Համամասնությունը լրիվ չի պահպանված, որովհետև երկրորդ մասը քանակով գերադանցում է։ Հետևյալ օրինակի մեջ մասերը լրիվ չափակից են և կապված են բայց շաղկապով.

Մառի նիւդն որ շոր լինի, ո՞վ մնայ թլ, իսկի ծաղկի,
Սպիտակ մազն որ սև նեռկեն, ո՞վ ասլ, թլ, հսկի թափի,—
Բայց մարդ մեղաւոր ու սև գիտեմ, որ կու սպիտակի,
Աստուած մեկ բանիկ կուզէ, որ «մեղայ» ասլ, ու Թաւի (Հ. Երզնկացի, 150)։

Երբեմն՝ պարբերությունը շարահյուսական այնպիսի ամբողջական միավոր է, որը կազմված է երկու հակադիր մասերից, իսկ այս մասերը քերականորեն, տրամաբանորեն և հնչերանգով սերտորեն կապակցվում են միմյանց և կազմում են մի միասնություն։ Շնորհիվ քերականական, տրամաբանական և հնչերանգային միասնական կապերի պարբերությունը հեշտությամբ ընկալվում է ընթերցողի կողմից իր առանձին մասերով, անդամներով ու հատածներով իբրև շարահյուսական վերջացած ու փակված ամբողջություն։ Այս ամբողջությունը ունի այն բոլոր հատկանիշները, որոնք հատուկ են սովորական նախադասություններին, սակայն պարբերությունը նախադասությանը հատուկ այդ հատկանիշներից բացի ունի իր սեփական յուրահատկությունները, որոնք ոչ մի նախադասություն չունի։ Այդ հատկանիշներն են՝ անդամահատման միանմանությունը, քերականական կառուցվածքի սերտ միասնությունը, շարահյուսական փակ կառուցվածքը, հնչերանգային ձևավորվածությունը, հատկապես առաջին մասի բաղադրականու-

թյուններ և այդ բաղադրիչների քերականական համասեռությունը, դրանց հնչերանգային աստիճանական բարձրացումը, շարադասման որոշ կայունությունը, ապա առաջին մասին հաջորդող դադարը և երկրորդ մասի եզրափակումն ու իջնող հնչերանգը։

Այս հատկանիշները պարբերությունը դարձնում են բովանդակությամբ մի վերջացած, ավարտուն արտահայտություն, ուր տրվում են փաստարկները և դրանց հիմնավորումը, որով ստացվում է նշված իմաստային միասնությունը։ Մասնակի առանձին մտքերը թվարկվում են իրրև համասեռ, միմյանց հետ կապված մտքեր համապատասխան ու ներդաշնակ ձևավորումներով, որոնք ներքին կապերով շղթայվում են գլխավոր մտքին և ենթարկվելով նրան՝ միասնաբար կազմում են բազմազան մտքերի մի ամբողջություն, մինչդեռ սրան հակադիր կտրտված խոսքը բազմազան մտքերը հաղորդում է միմյանցից անկախ, առանձին-առանձին, առանց ներքին տրամաբանական կապերի, միասնական հնչերանգի։

Արդ՝ այս ամենից հետո էթե սահմանենք, դուրս կգա, որ պարբերույթ է կոչվում այն բարդ կամ բարդացված ու ծավալուն ամբողջական արտահայտությունը, որ բնութագրվում է հնչերանգային երկու հակադիր մասերով, մասերից մեկի (հատկապես առաջինի) համասեռ անդամների բազմազանությամբ, սրանց շարադասման որոշ կայունությամբ, կշռույթային կանոնավորությամբ, ներդաշնակ թվարկումով, արտաբերման անընդհատ լարված ու բարձրացող հնչերանգով և ապա դադարով, որին հաջորդող երկրորդ մասը, ունկնդիր իր անդամների քանակից, իջնող հնչերանգով եզրափակում է բնականական, տրամաբանական ու հնչերանգային մի միասնության է վերածում հաղորդումը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽԱՎՀ—Խ. Արովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1959։
ՎՓԸԵ—Վ. Փափազյան, Ընտիր երկեր, 1951։
ԲԵԺ—Բաֆֆի, Երկերի ժողովածու, 1955—59։
ՀԹԵԺ—Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1950—59։
ԱԻԵԺ—Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Երևան, 1950։
ՆԵԺ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, Երևան, 1955։
ՌՍԵ—Ռ. Սևակ, Երկեր, Երևան, 1955։
ՎԹԵ—Վ. Թոթովենց, Երկեր, Երևան, 1957։
ՌՊԵ—Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1955։
ԳՆ—Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Վենետիկ, 1795։
ՍՆ—Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Երևան, 1959։
ԳՋԵԺ—Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, 1954։
ՀՀՀ—Հովհ. Հովհաննիսյան, Հատընտիր, Երևան, 1953։
ՍՋՊԹ—Ստ. Զորյան, Պապ թագավոր, Երևան, 1957։
ԴՎԲ—Դ. Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955։
ՋԵԵ—Ջ. Եսայան, Երկեր, Երևան, 1959։
ԵՋԸԵ—Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955։
ՄՄԵԺ—Մ. Մեծարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1956։

ПЕРИОД В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Доктор филолог. наук В. Д. АРАКЕЛЯН

(Р е з ю м е)

Ученые древности основным признаком периода (Περίοδος) считали целостность и единство речи, одновременно указывая на различия между периодом и предложением. Однако им не удалось дать четкого разграничения периода и предложения.

Период — это такая целостная синтаксическая единица, которая состоит из двух разнородных частей, а эти части грамматически, логически и интонационно тесно связаны между собой и образуют одно целое. Периодом называется такое сложное или

усложненное и развернутое выражение, которое характеризуется двумя интонационно противоположными частями, многообразием однородных членов одной из этих частей (в особенности первой), относительной устойчивостью порядка членов, непрерывно напрягающейся и восходящей интонацией, а затем паузой и следующей за ней второй частью, независимо от количества ее членов, с нисходящей интонацией, заключающей и превращающей все сообщение в одно грамматическое, логическое и интонационное целое.

В статье проанализированы составные части двучленного, трехчленного, четырехчленного и многочленного периода и их разновидности, подтвержденные примерами из литературных произведений древнеармянского и современного армянского языка. Двучленность и многочленность первой части периода является одним из его существенных признаков. Грамматическая однородность первой части также является обязательным условием для периода.

Одной из существенных особенностей периода является пауза. Хотя она имеет интонационное значение, но именно она делит период и определяет границу между двумя его частями и противопоставляет их друг другу с их восходящей и нисходящей интонацией, создавая одно целое.

Одним из признаков периода является его закрытость. То, что совершается во второй части, оно и заключает, регулирует, завершает выражение со всеми его смысловыми и структурными связями.